ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

(1967 թ. հունվար—հունիս)

ԲՈՒԼՂԱՐԻԱ

Բուլղարական «Նարոդնա կուլտուրա» հրատարակչությունը 25.000 տպաքանակով տպագրել է Վ. Անանյանի «Հովազածորի գերիները» գիրքը։ Թարգմանությունը ռուսերենից կատարել է Մարիա Դրակովան, խմբագիրն է Զորքա Իվանովան, նկարները՝ Խրիստո Նեյկովի։ Հեղինակի և գրքի մասին ներածականը գրել է Կարո Հայրապետյանը։

«Երևան», 10 մարտի

* * *

Ապրիլի 5-ին Ռուսեռում կայացել է Ս. Լազարովի դասախոսությունը՝ նվիրված կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի կյանքին և ստեղծագործությանը։

«Երևան», 21 ապրիլի

* * *

Բուրգազում, Սլիվենում, Յամբոլիում և Ռուսեռում փետրվարին և ապրիլին տեղի է ունեցել Ա. Պերպերյանի դասախոսությունը՝ «Դանիել Վարուժանի կյանքը և ստեղծագործությունը» թեմայով։

«Երևան», 17, 24 փետրվարի, 10 մարտի, 21 ապրիլի

* * *

Սլիվենում փետրվարի 12-ին Հայ մշակույթի տանը կազմակերպվել է հանդես՝ նվիրված Վարդանանց պատերազմին, որի մասին զեկուցել է Մ. Արզարյանը։

«Երևան», 24 փետրվարի

* * *

Սոֆիայում փետրվարի 18-ին Հայ մշակույթի տանը տեղի է ունեցել տեղի «Երևան» երգչախմբի տարեկան երեկույթը։

«Երևան», 3 մարտի

* * *

Բուրգազում փետրվարի 19-ին «Երևան»-ի ակումբում տեղի է ունեցել «Մեսրոպ Մաշտոց՝ հայ գրերու ստեղծողը» դասախոսությունը (դասախոս՝ Հ. Հակոբյան)։

«Երևան», 3 մարտի

ՉԵԽՈՍԼՈՎԱԿԻԱ

Պրագայում Լյուդմիլա Մոտալովայի թարգմանությամբ չեխերեն լույս է տեսել Դ. Արշակյանի «Թրաշուշանները»։

«Լրարերք», 21 մարտի։

ԵԹՈՎՊԻԱ

Եթովպահայ գաղութում գոյություն ունեցող բազմաթիվ կազմակերպություններից և միություններից ամենից հին Հ. Բ. Ը. միության Ագիս-Աբեբայի մասնաճյուղն է, որ հիմնվել է մոտ 1910 թ.։ Այն ունի 80—90 անդամ, մեկ դպրոց՝ Ազգ. Գեորգով վարժարանը։

«Զարթոնք», 22 մարտի

ԼԻԲԱՆԱՆ

Բեյրութի Տոնիկյան հրատարակչությունը անգլերեն լույս է ընծայել մեծ եղեռնից հրաշքով փրկված հայուհի Օրորա Մարտիկյանի «The auction of souls» («Հոգիների աճուրդը») հուշագրությունը։ Գրքի առաջին հրատարակությունը կատարվել է Լոնդոնում։

«Երիտասարդ Հայաստան», 20 հունվարի

* * *

Բեյրութում հունվարի 24-ին բացվել է փարիզահայ նշանավոր գեղանկարիչ Բյուզանդ Թոփալյանի ցուցահանդեսը։ Բացման հանդեսին ներկա են եղել լիբանանահայ մշակութային միությունների և տեղական ու օտար մամուլի ներկայացուցիչները։

«Ջահակիր», 9 փետրվարի

* * *

Հունվարի 28-ին Բեյրութում տեղի է ունեցել Եղիշե Չարենցի ծննդյան 70-ամյակին նվիրված հանդիսավոր երեկո։ Չարենցին նվիրված զեկուցումներ են կարդացել Պ. Սիմոնյանը, Վ. Վահյանը։ Վերջում տրվել է համերգ։

«Ջահակիր», 16 փետրվարի

• • •

Բեյրութի Թեքեյան մշակութային միությունը մարտի 4-ին մեծ հանդիսավորությամբ նշել է նշանավոր երգիծանկարիչ Ալեքսանդր Սարուխանի հասարակական ու արվեստասիրական գործունեության քառասունհինգ ամյակը։

«Զարթոնք», 4, 7 մարտի

• • •

1967 թ. փետրվարից Բեյրութի կանանց կոլեջում դասավանդում է հայոց պատմության և հայ մշակույթի դասընթաց անգլերեն լեզվով։ Այստեղ սովորում են օտար ուսանողուհիներ և այն հայ ուսանողուհիները, որոնք հայկական վարժարաններ չեն հաճախել։ Այս դասընթացի երեք տարվա ծախսերը ամբողջովին հոգացել է տիկին Պերճուհի Ապրոյանը։

«Զարթոնք», 21 մարտի

ԱՄՆ

Մարտի 28-ին Կահիրեում բացվել է Եգիպտոսի նկարչական ընկերության 43-րդ ցուցահանդեսը. որտեղ 100 արվեստագետներ ցուցադրել են 146 գործեր։ Ցուցահանդեսին մասնակցել են նաև եգիպտահայ նկարիչները։

Ոսկե մեդալի են արժանացել տաղանդավոր հայ նկարիչ Ս. Սամսոնյանը և արար նկարիչ Նապիլ Սոլիմանը։

«Ջահակիր», 30 մարտի

ՍՈՒԴԱՆ

Խարթումում գործում է Հայոց ազգային վարժարան։ Աշակերտները սկսած մանկապարտեզից սովորում են հայերեն, անգլերեն և արաբերեն։

Խարթումի հայ գաղութը մեծ հոգատարություն է ցուցաբերում Ազգային վարժարանի նկատմամբ։ Վարժարանը հանդես է գալիս գեղարվեստական և թատերական ներկայացումներով։

«Ջահակիր», 16, 23 մարտի

ՔՈՒՎԵՅՏ

Քուվեյտում այժմ կան 6000 հայեր, որոնք ունեն ազգային վարժարան՝ 200 աշակերտներով։

«Արարատ», 23 մայիսի

ՀՆԴԿԱՍՏԱՆ

Բոմբեյում ներկայումս ապրում են 30 հայեր, կա մեկ հայկական եկեղեցի։

Կալկաթայի հայերի թիվը հասնում է 500-ի, քաղաքի երեք եկեղեցիները կառուցվել են 1707, 1867 և 1906 թվականներին։ Մարդասիրական հեմարանը ունի մանկապարտեզ և դպրոց՝ 11 դասարանից, 140 աշակերտներով։

Մադրասում ապրում են 5 հայեր, կա հայկական երկու եկեղեցի, որոնցից մեկը կառուցված է 1712 թվականին։

«Արարատ», 19 մարտի

ԻՐԱՆ

Թեհրանում լույս է տեսել Մկրտիչ Արմենի «Հեղնար աղբյուր»-ը պարսկերեն, Օրվանդ Փափազյանի թարգմանությամբ։

«Լրարեր», 18 մարտի

ԹՈՒՐՔԻԱ

Մարտի վերջերին Պոլսի Քաղաքապետական պալատի ցուցասրահում բացվել է սովետական նկարչության և քանդակագործության ցուցահանդես։ Ցուցահանդեսին ներկայացված են նաև Մարտիրոս Սարյանի երեք գործերը։

«Արարատ», 20 ապրիլի

• • •

Պոլսում բնակվում են 65 հազարից ավելի հայեր։ Հայկական դպրոցների թիվը 28 է, որից 5-ը երկրորդական (լիցեյ), ութը՝ միջնակարգ, իսկ մնացյալները՝ նախակրթական։ Աշակերտության թիվը 8000 է։ Դասավանդումը տարվում է հայերեն և թուրքերեն։ «Մշակութային թատերասիրաց միությունը» 26 անգամ ներկայացրել է Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ»-ը։

Պոլսում հրատարակվում են «Ժամանակ» և «Մարմարա» օրաթերթերը, «Քուլիս» ամսագիրը, «Արշավ» շաբաթաթերթը, «Կավոռշ» երգիծաթերթը, «Ս. Փրկիչ» ամսագիրը, «Սան» գրական-գեղարվեստական պարբերաթերթը, «Պարտեզ» մանկական ամսագիրը, «Երջանիկ» տարեգիրքը։ Օրաթերթերի տպաքանակն է 2500—3000, իսկ պարբերաթերթերինը՝ 400—500։

Ինչպես հայտնում է «Արարատը» «կ'ըսուի թէ Թուրքիոյ ներքին գավառներու մեջ կապրին շուրջ 20 հազարի հասնող հայություն, ցրված Անգարայի, Կեսարիոյ, Խարբերդի, Ամասիոյ, Եոզկաթի, Տիգրանակերտի մեջ և այլուր։ Անոնց վիճակը ողբալի է»։

«Արարատ», 7 մարտի

• • •

Պոլսի մշակութային թատերասիրաց միությունը վաղամեռիկ բանաստեղծ Մատթեոս Զարիֆյանի հիշատակին ցերեկույթ է կազմակերպել։ Պատրաստվել է նաև բանաստեղծին նվիրված գրքույկ։

«Աշխարհ», 18 ապրիլի

• • •

Ստամբուլի Մշակութային թատերասիրաց միության նպատակն է ստամբուլահայ երիտասարդությանը ծանոթացնել անցյալի և ներկայի հայ գրողների և արվեստագետների հետ։ Միությունը կազմակերպում է թատերական ներկայացումներ, հուշ-երեկոներ։

Միությունը ունի վարչություն, մշակութային, գեղարվեստի և երիտասարդական հանձնախմբեր։ Միությունը պատրաստվում է տոնելու Չարենցի 70-ամյակը։

«Աշխարհ», 30 մայիսի

• • •

Պոլսում Թորգոմ Ստեփանյանը լույս է ընծայել դիրք՝ նվիրված թուրք մշակույթին ծառայած հայ մտավորականներին և պետական գործիչներին։

«Զարթոնք», 20 մայիսի

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիայի հեռուստատեսությունը ցուցադրել է Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսը Ռոժե Ինգլիզիի բեմադրությամբ։

«Ջահակիր», 27 մայիսի

• • •

Փարիզում լույս է տեսել «Այսօրվա բանաստեղծները» մատենաշարի 121-րդ հատորը՝ նվիրված Շաոլ Ազնավուրին, նշանավոր քննադատ Իվ Սալկի հեղինակությամբ։ Այս մատենաշարով լույս են տեսել մենագրություններ՝ նվիրված Պոլ Էլյուարին, Լուի Արագոնին, Տադորին, Հայնեին, Բոդլերին և ուրիշների։

«Ջահակիր», 19 հունվարի

• • •

Փարիզի օպերային բեմում աչքի է ընկել նոր աստղ՝ մեցցո-սոպրանո Լին Տուրյանը (Նվարդ Տիրատուրյան)։ Ֆրանսիական մամուլը մեծագույն հիացմունքով է խոսել այս հազվագյուտ շնորհ ունեցող երգչուհու մասին։

Լա Սկալայի նշանավոր տենոր Բրունո Պրեվետին, որ ներկա է եղել Լին Տուրյանի ելույթին, շնորհավորել տաղանդավոր հայուհուն, ասել է. Միայն երկու երգչուհիներ կան աշխարհում, որոնք կարող են երգել էպոլիի դերերգերը Վերդիի «Դոն Կարլոս»-ի մեջ. դրանցից մեկը Ֆիորենցա Քոսոտտոն է, իսկ մյուսը՝ Լին Տուրյանը։

«Ջահակիր», 6 ապրիլի

• • •

Ֆրանսահայ մշակութային միության Շավիլի մասնաճյուղը հունվարի 25-ին կազմակերպել է հայկական կինոնկարների ցուցադրություն Սովետական Հայաստանի 46-րդ տարեդարձի կապակցությամբ։

«Աշխարհ», 4 փետրվարի

• • •

Փարիզում մարտի 2-ին բացվել է Մուտաֆյանի ցուցահանդեսը։ Ցուցահանդեսի բացմանը ներկա էր մեծ բազմություն, Փարիզի քաղաքապետը, որ ներկա էր ցուցահանդեսի բացմանը, Մուտաֆյանին հանձնել էր Փարիզ քաղաքի մեդալը և ջերմորեն գնահատել նկարչի գործերը։

«Աշխարհ», 13 մարտի

• • •

Փարիզի Օթել մոդեռնի սրահում ապրիլին տեղի է ունեցել Փարիզի հայ գրողների միության գրական երեկո՝ նվիրված Ավետիս Ալեքսանյանին և Հրանդ Գույումճյանին։ Երեկոն բացել է Հր. Բալույանը։ Ալեքսանյանի և Գույումճյանի գրական գործունեության մասին զեկուցել են Մաոի Աթմաճյանը և Զարե Հրբունին։ Վերջում խոսել է Զ. Խանզադյանը։

«Աշխարհ», 29 ապրիլի

ԻՏԱԼԻԱ

Հռոմում փետրվարի 20-ին բացվել է գրաֆիկական արվեստի ցուցահանդեսը, որին մասնակցել է Լեոն Ժամկոչյանը։

«Զարթոնք», 18 մարտի

• • •

Վենետիկի Մխիթարյան միաբանությունը լույս է ընծայել հայկական մանրանկարչությանը նվիրված մի հատոր՝ Սիրարփի Տեր-Ներսեսյանի ներածականով։ Հատորը պարունակում է 9—13 դարերին վերաբերող 84 նկարներ։ Գիրքը կրթարգմանվի ֆրանսերեն, իտալերեն և անգլերեն։

«Երեան», 3 փետրվարի

• • •

Իտալիայի Պարմ քաղաքի Հայ ուսանողական մշակութային միությունը կազմակերպել է «Հայ մշակույթի շաբաթ»։ Մարտի 26-ից մինչև ապրիլի 2-ը ռադիոյով և հեռուստատեսությամբ դասախոսություններ են հաղորդվել հայոց պատմության, հայ ճարտարապետության, հայ երաժշտության, մանրանկարչության և հայ ձեռագրերի մասին։

«Երեան», [illegible] մայիսի

• • •

Եվրոպայի Հայ ուսանողական միության Պարմի մասնաճյուղը մարտի 28-ից մինչև ապրիլի

2-ը հայկական շաբաթ է կազմակերպել հայկական մշակույթը օտարներին ծանոթացնելու համար։ Շաբաթի ժամանակ դասախոսություններ են կարդացվել հայոց պատմության, ճարտարապետության, երաժշտության, մանրանկարչության մասին։

«Աշխարհ», 18 ապրիլի

• • •

Ապրիլի 11-ին իտալահայ մշակութային միությունը կազմակերպել է հուշ-երեկո՝ նվիրված Համաստեղի հիշատակին։

«Աշխարհ», 18 ապրիլի

ԱՆԳԼԻԱ

Լիբանանահայ տաղանդավոր երգչուհի Լուիզա Գոզապալյանը մեծ հաջողությամբ հանդես է եկել Լոնդոնի Արքայական օպերայում։

«Արարատ», 2 մարտի

• • •

Լոնդոնի համալսարանի կովկասյան բաժնի վարիչ, անվանի կովկասագետ, պրոֆեսոր-դոկտոր Դ. Մ. Լանգը հունվարի 18-ին դասախոսություն է կարդացել Արվեստների արքայական ակադեմիայում «Արդի Հայաստան և արդի Վրաստան» թեմայով։ Դասախոսությանը ներկա են եղել մի շարք անգլիացի ականավոր կիտնականներ։ Խոսելով Հայաստանի քաղաքական, տնտեսական, կրոնական, գիտական ու մշակութային կյանքի մասին, նա մասնավորապես նշել է. «Հայ ժողովուրդը աշխարհի ամենեն ընդունակ, ամենեն շարքաշ ու շինարար ժողովուրդներեն է։ Շատ ճիշտ բնորոշում է այն, թե հայը քարը հացի կվերածե»։ Նա անդրադարձել է մեծ եղեռնին, ինչպես նաև խոսել է Արևմտյան Հայաստանի հայկական հուշարձանների վիճակի մասին։ Այնուհետև նա խոսել է այսօրվա Հայաստանի նվաճումների մասին և մոգական լապտերով ցուցադրել է պատմական և արդի Հայաստանին ու Վրաստանին վերաբերող նկարներ։

«Աշխարհ», 18 փետրվարի,
«Լրաբեր», 14 մարտի

ԿԱՆԱԴԱ

Վերջին տասնամյակում Կանադայի Մոնրեալ քաղաքում ստեղծվել է հայկական նոր գաղութ. 1955 թ. գաղութը հազիվ հարյուր մարդ ուներ, իսկ այժմ՝ հինգ հազարից ոչ պակաս։ Գաղութը ներկայումս ունի չորս եկեղեցի, շաբաթօրյա և կիրակնօրյա դպրոցներ, կրթական խորհուրդներ, մշակութային միություններ, երկու լրատու թերթեր և այլն։

«Պայքար», 1 ապրիլի

• • •

1967 թ. հունվարից Մոնրեալում ստեղծվել է հայ գրասերների խմբակը, որի նպատակն է հետաքրքրություն առաջացնել դեպի հայ գրականությունը։

Մինչ այժմ տեղի ունեցած վեց հավաքույթների ժամանակ լսվել են զեկուցումներ Հայաստանի գրողների V համագումարի մասին, հայկական ռեալիզմը և Գրիգոր Զոհրապը, Համաստեղը և իր վերջին գործը՝ «Առաջին սերը» Քիմանների շուրջը և այլն։ Բացի սրանից հաղորդումներ են տրվում հատկապես Հայաստանի գրական կյանքի մասին։ Որոշված է կազմակերպել գրադարան և բաժանորդագրվել Հայաստանի և արտասահմանի գրական կարևոր թերթերին և ամսագրերին։

«Լրաբեր», 29 ապրիլի

ԱՄՆ

Փետրվարի 4-ին Ամերիկայի Ուիթրըր քաղաքում հայ նշանավոր ջութակահար Վարուժան Գոճյանը համերգ է տվել Լոս Անջելոսի Ֆիլհարմոնիայի խմբի հետ։

«Աշխարհ», 18 մարտի

• • •

Մոնտեպելլո քաղաքի Պիքնել այգում ապրիլի 23-ին, Հայկական հուշարձանի հանձնախմբի ջանքերով և Լոս Անջելոսի հայության մեծ աջակցությամբ, 5000 հոգու ներկայությամբ հիմք դրվեց հայ նահատակաց հուշարձանի կառուցմանը։ Հանդիսավոր արարողությանը ներկա են եղել բարձրաստիճան քաղաքական գործիչներ, կրոնական ներկայացուցիչներ, ազգային ղեկավարներ, մամուլի ներկայացուցիչներ, Մոնտեպելլոյի քաղաքապետը և քաղաքապետարանի անդամները։

«Լրաբեր», 13 մայիսի

• • •

Լոս Անջելոսի հայ կրթական տան սրահում ապրիլի 23-ին Հրանդ Ք. Արմենը դասախոսություն է կարդացել Տիգրան Մեծի մասին։

«Լրաբեր», 23 մայիսի

• • •

Փասատինայում մահացել է նշանավոր քանդակագործ Նշան Թուրը։ Քարի, փայտի, մարմարի և բրոնզի վրա կատարած նրա ստեղծագործություններից շատերը ցուցադրվել են նշանավոր թանգարաններում։

«Պայքար», 1 մարտի

ԱՐԳԵՆՏԻՆԱ

Արգենտինահայության թիվը հասնում է 50000-ի, որոնց մեծ մասը կենտրոնացած է Բուենոս-Այրեսում, Կորդորայում և Ռոսարիում։ Ազգային գործերը ղեկավարում է Կեդրոնական վարչությունը։ Գործում են բարենպատակ հաստատություններ, դպրոցներ, հրատարակվում են թերթեր։

«Արարատ», 23 մայիսի

ԱՎՍՏՐԱԼԻԱ

Ավստրալիայի հայ գաղութը վերջին տարիների ընթացքում քառապատկվել է։ Սիդնեյում այժմ կա 8000—9000 մարդ, իսկ Մելբուռնում՝ 1500։ Սիդնեյում գործում են Հ. Բ. Ը. միության մասնաճյուղը և հայկական սրահը։ Մելբուռնում լույս է տեսնում «Հույս» ամսաթերթը՝ Ոսկան Աբ. Գալփաքյանի խմբագրությամբ։

«Զարթոնք», 10 մարտի

• • •

1967 թ. փետրվարից սկսած Սիդնեյի հայության համար բացվել է հայկական վարժարան, որտեղ դասավանդվում են հայոց գրականություն, հայոց պատմություն և երգեցողություն։ Աշակերտների թիվն է 87։

«Արարատ», 9 մայիսի

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ